

ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմն ու կառուցվածքը ու դրանց փոփոխության միտումները հետհեղափոխական Հայաստանում

Ընդհանուր ժողովի հարգելի մասնակիցներ, ներկաներ, ձեզ եմ ներկայացնում «ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կազմն ու կառուցվածքը, դրանց փոփոխության միտումները հետհեղափոխական Հայաստանում» թեմայի կատարման հակիրճ նկարագիրը։ Տնտեսության կայուն զարգացման համատեքստում մեծ նշանակություն ունի արդյունավետ հարկային համակարգը։ Թեմայի կատարման ընթացքում վերլուծվել են «ՀՀ հարկային համակարգում տեղի ունեցող փոփոխությունները մինչ հեղափոխությունն ու դրանից հետո, «ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերի փոփոխության միտումները, «ՀՀ հարկային օերնսգրքի փոփոխությունների ազդեցությունը «ՀՀ պետական պարտքի վրա, հետհեղափոխական շրջանում «ՀՀ պետական պարտքի փոփոխության միտումները հարկային եկամուտների փոփոխությանը զուգընթաց, ներկայացվել են ուղղակի և անուղղակի հարկերի գծով փոփոխություններն ու դրանց դինամիկան մինչև հեղափոխությունն ու դրանից հետո։

Թեմայի կատարման ընթացքում վեր են հանվել «ՀՀ հարկային համակարգի առջև ծառացած խնդիրները, և դրանց լուծմանն ուղղված փոփոխություններ կատարելու նպատակները։ Տնտեսաշափական գնահատման եղանակով ստացվել են կարճաժամկետ ժամանակահատվածի հարկային եկամուտների, ինչպես նաև հարկային եկամուտների կառուցվածքում 4 հիմնական հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային, շահութահարկ, ակցիզային) բոյանսի գործակիցները և այդ գնահատված գործակիցների, ինչպես նաև հեղինակների կողմից հաշվարկված հարկային կայունության գործակիցների, օրենսդրական փոփոխությունների վերլուծության հիման վրա տրվել են հարկային օրենդրության փոփոխությունների դերի գնահատականը հարկային եկամուտների ավելացման գործում, ինչպես նաև որվագծվել են հարկային քաղաքականության առաջնայնությունները։ Յուրաքանչյուր հարկատեսակի գծով կատարվել են համապատասխան եզրակացություններ։ Գրականության ակնարկի հիման վրա պարզվել է, թե «ՀՀ դեպքում, որ շեմը կարող է համարվել պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության սահմանային շեմը, որը գերզանացելու դեպքում վերջինս կարող է բացասաբար անդրադառնալ իրական ՀՆԱ-ի վրա, ներակայցվել են հարկային եկամուտների կառուցվածքում 4 հիմնական հարկատեսակ համարվող՝ ԱԱՀ-ի,

Եկամտային հարկ-ի, շահութահարկի, ակցիզային հարկի դինամիկան և դրանց ավելացման վրա ազդող գործոնները, ինչպես նաև պետական պարտքի և դրան առնչվող այլ հիմնական ռիսկերը՝ հատկապես պարտքային ճգնաժամի առաջացման տեսանկյունից: Վերլուծվել և ներկայացվել է << հարկային համակարգում ֆինանսական տեխնոլոգիաների ներդրումը որպես հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման մեթոդ, ներկայացվել է Ֆինանսական տեխնոլոգիաների ներդրման միջազգային՝ մասնավորապես՝ Քենիայի փորձը: Ներկայացվել է բարեփոխումների ռազմավարության առանցքային կետերը և ստացված արդյունքները: Ինչպես նաև ներկայացվել է << հարկային համակարգի հագեցվածությունը ֆինանսական տեխնոլոգիաներով:

Թեմայի ուսումնասիրման ընթացքում հանգել ենք ստորև բերվող եզրահանգումների, որոնցից ուշադրության են արժանի հետևյալները, մասնավորապես՝

1. << կառավարությունը նախքան 2020թ.-ին արձանագրված տնտեսական անկումը փորձում էր կրճատել պետական պարտք/ՀԱԱ հարաբերակցությունը հարկային եկամունտների ավելացմանը զուգահեռ, որը պայմանավորված էր ինչպես տնտեսական աճով, այնպես էլ օրենսդրական փոփոխություններով և հարկային վարչարարությամբ:
2. Բացահայտել ենք, որ << հարկային համակարգը բոյանտ չէ, և իրական ՀԱԱ-ի 1 տոկոս փոփոխությունը, ընդհանուր առմամբ կարող է հանգեցնել 0.746%-ի փոփոխության: <Ետևաբար, կառավարության պարտք/ՀԱԱ հարաբերակցության կրճատման նպատակով << կառավարությունը լրացնուիչ հարկային եկամուտներ հավաքրելու տեսանկյունից մի շարք միջոցառումներ է իրականացնելու: 4 հիմնական հարկատեսակներից ամենաբրյանտը համարվել է շահութահարկը, իսկ ակցիզային հարկի բոյանսի գործակիցը ևս գնահատվել է 1-ից բարձր, ինչն էլ հիմնականում պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով, որոնք ուղղված էին բարձրացնելու ակցիզային հարկը, ինչի մասին փաստում է ակցիզային հարկի կայունության գործակիցը: Ամենացածր բոյանսի գործակիցը գնահատվել է ԱԱՀ-ի կտրվածքով, որին հաջորդել է եկամտային հարկը:
3. Ընդհանուր առմամբ, 2018-2020թթ.-ներին հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունները չեն հանգեցնի ավելի մեծ չափերի հասնող հարկային եկամուտ-

Ների ավելացմանը՝ տնտեսական աճի պայմաններում: <Ետևաբար, կառավարության առաջնահերթությունները հատկապես եկամտային հարկի և ԱԱՀ-ի ուղղությամբ պետք է լինի դրանց համապատասխան հարկային բոյանսի գործակիցների արժեքների բարձրացումը՝ ավելի շատ հարկային եկամուտներ ապահովելու տեսանկյունից: Եկամտային հարկի պարագայում կառավարությունը կարող է հարկային եկամուտների աճ արձանագրել նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ, սակայն այս դեպքում, որոշակի հարկային բեռ է կրելու կառավարությունը մասնավոր հատվածի հետ մեկտեղ: Իսկ երկրորդ եղանակը որոշակիորեն պրոգրեսիվ համակարգին վերադառնալն է (օրինակ՝ մեկ շեմ երկու դրույքաչափի կիրառմամբ)՝ ներառյալ ոչ բարձր չափերի հասնող նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: << կառավարության կողմից իրականացվող հարկային քաղաքականության ճեղքի կրճատմանն ուղղված միջոցառումներն իրականացման դեպքում, որոշակիորեն կավելանան ԱԱՀ-ի գծով հարկային եկամուտները: Առաջարկվել է նաև կատարել անցում ԱԱՀ-ի տարբերակված դրույքաչափերին:

Հաշվետու տարում հետազոտված թեմայի շրջանակներում հետազոտական խումբը հրապարակել է 3 գիրք և 36 գիտական հոդված, որից 22 տեղական, իսկ 14-ը արտասահմանյան պարբերականներում: